Հարգելի գործընկերներ,

Տեղեկացնում ենք, որ 2024 թվականի մայիսի 8-ից ուժի մեջ են մտել «Դեղերի մասին», «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքներում կատարված փոփոխությունները և լրացումները, որոնց համաձայն դեղերի և բժշկական արտադրատեսակների շրջանառության պետական կարգավորման ոլորտում փորձաքննությունների համար գանձվում է պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված կարգով և չափով:

«Պետական տուրքի մասին» օրենքի 20.3-**րդ** հոդվածի համաձայն՝ դեղերի և բժշկական արտադրատեսակների շրջանառության կարգավորման ոլորտում փորձաքննությունների, ԵԱՏՄ կարգով գրանցումը գործողության մեջ պահելու և փորձաքննություն չպահանջող փոփոխության մասին ծանուցումն ընդունելու համար վճարվում է պետական տուրք՝ սահմանված դրույքաչափերով https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=192548

«Պետական տուրքի մասին» օրենքի՝
20.3-րդ հոդվածով սահմանված դրույքաչափերով վճարումները անհրաժեշտ է կատարել N 900005003125 հաշվեհամարին (ստացող՝ ՀՀ պետական բյուջե):

Այլ պետություններից արտարժույթով փոխանցում կատարելու համար բանկային ռեկվիզիտներն են՝

CCY	CORRESPONDENT BANK	SWIFT CODE	ACCOUNT
EUR	Commerzbank, Frankfurt	COBADEFFXXX	400 886 42 4101
GBP	HSBC, London	MIDLGB22XXX	35768988
USD	JPM Chase Bank, N.A., NY	CHASUS33XXX	001-1-010782
RUB	AO RAIFFEISENBANK, Moscow	RZBMRUMMXXX	30111810400000000132 К/с № 30101810200000000700 в ГУ Банка России по ЦФО, БИК 044525700

<u>For RUB</u>
Наименование счета: Министерство финансов РА
Наименование банка: Центральный Банк Республики Армения
ИНН 9909106378, КПП 774487001
Назначение платежа: для кредитования на счет: (для экспертизы: **900005003125)**

<u>For EUR, GBP, USD</u>
Name of accounts: Ministry of Finance of RA
Bank name: Central Bank of the Republic of Armenia
SWIFT code: CBRAAM22
Details of payment: for further credit to account (For the expertise: No **900005003125)**

Միաժամանակ հայտնում ենք, որ «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ը պետական տուրքի համար հաշիվ-ապրանքագիր չի կարող տրամադրել: Հետևաբար, վերոհիշյալ պետական տուրքերի վճարման համար հիմք է հանդիսանում միայն «Պետական տուրքի մասին» օրենքը:

Հիշեցնում ենք, որ **դրական փորձագիտական եզրակացության հիման վրա** հավաստագրեր կամ լիցենզիաներ կամ թույլտվություններ ստանալու համար գանձվող պետական տուրքերի հաշվեհամարները տարբերվում են, մասնավորապես.

Անվանումը	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի հոդվածը (մասը)	Գանձապետական հաշվեհամար
Դեղերի պետական գրանցման համար	Հոդված 16, մաս 35	900005016168
Պատշաճ արտադրական գործունեության հավաստագիր տալու համար	Հոդված 20, մաս 1, կետ 50	900005001376
Պատշաճ բաշխման գործունեության հավաստագիր տալու համար	Հոդված 20, մաս 1, կետ 51	900005001384
Դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի և հետազոտվող դեղագործական արտադրանքի ներմուծման կամ արտահանման հավաստագիր տալու համար	Հոդված 20, մաս 1, կետ 52	900005001350
Բժշկական արտադրատեսակների ներմուծման (համապատասխանության) հավաստագիր տրամադրելու համար՝	Հոդված 20, մաս 1, կետ 52.1	900005002804
Պատշաճ լաբորատոր գործունեության հավաստագիր տալու համար	Հոդված 20, մաս 1, կետ 52.2	900005003133
Դեղերի, բժշկական արտադրատեսակների և բուժական մեթոդների գովազդի թույլտվություն տրամադրելու համար	Հոդված 20, մաս 1, կետ 52.3	900005003141